

## Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ – 2022թ.

Հարցաշար - 12-րդ դասարան

Տևողությունը 180 րոպե

Տարիներ հետո հիասթափություն կապրես այն ամենի համար, ինչ որ չես արել, քան նրանց համար, ինչը արել ես: Ընդունի՛ր կյանքի մարտահրավերները: Նրա գաղտնախորհուրդ կեռամաններում, իհարկե, շատ են խոչընդոտները, որոնք, սակայն, հաղթահարելի են, եթե չես ընկրկում և չես տրտնջում. լավկանությունը թույլ մարդու հատկանիշ է: Չի սայթաքում միայն նա, ով ոչինչ չի անում: Պետք չէ *վախենալ* սխալներ *գործելուց*. Խուսափի՛ր դրանք *կրկնելուց*. Վայրէջքները թող չվհատեցնեն քեզ, բայց և բարձունքի հասնելիս էլ զգո՛ւյշ եղի՛ր. գլխապտույտ հաջողությունից մարդը երբեմն կորցնում է զգոնությունը. անկումը խիստ ցավալի է: Հիշի՛ր՝ **վսեմից մինչև ծիծաղելին մեկ քայլ է:**

Դժվարություններով անցած մարդն առավել ուժեղ է ու խոհուն. **ուզում ես ծիածան տեսնել՝ պետք է դիմանաս անձրևին:** Փորձի՛ր *խուսափել* **այրուռոսյան հաղթանակներից:** Ամեն անգամ՝ **ռուբիկոնն անցնելիս**, հաղթանակի բերկրանքը մղելու է մտահղացումների *իրագործելուն*, և անեզր երևակայությունդ թռիչքներ է արձանագրելու:

Ուրեմն արձակի՛ր նավի կապանքները և դո՛ւրս լողա ապահով նավահանգստից: Թող որ առագաստներդ որսան բարեբեր քամիները:

Ուսումնասիրի՛ր: Երագի՛ր: Բացահայտի՛ր:

1. Մեկնաբանի՛ր **Արձակի՛ր նավի կապանքները և դո՛ւրս լողա ապահով նավահանգստից:** **Թող որ առագաստներդ որսան բարեբեր քամիները** մտքերը 2-3 նախադասությամբ:

(2 միավոր)

2. Գրի՛ր **սքեմ, դիտապատ, խանդադատանք, տխեղծ, պղերգ, հախուռն, դիրտ, հանգույն, զգլխիչ, բարբաջանք** բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ:

(2 միավոր)

3. Կազմի՛ր 8 ածանցավոր բառ **առ**- ածանցով (առանց երկրորդ ածանցի) և տրված բառերից ընտրված համապատասխան արմատներով. ածուխ, միջանցք, նետահարել, երկերեսանի, աջհամբույր, բնատուր, երևութական, կախյալ, համարել, ձերբագատվել, մշտադալար, ողջամիտ, անկայուն: (2 միավոր)

4. Գրի՛ր հականիշ դարձվածքները. **բերանը ջուր առնել, երկինք հանել, խղճի մտոք, յոթ սարի հետևում:** (1 միավոր)

5. Նշի՛ր տեքստում շղատառ գրված անորոշ դերբայի պաշտոնները: (2 միավոր)

6. Տեքստից դուրս գրի՛ր հինգ բաղադրյալ ստորոգյալներ. նշի՛ր ստորոգելիների խոսքիմասային պատկանելությունը: (1 միավոր)

7. Գրի՛ր տեքստում գործածված **հետո, սակայն, թող, անգամ** բառերի խոսքիմասային պատկանելությունը: Նշի՛ր դրանց այլ խոսքիմասային արժեքները: (2 միավոր)

8. Մեկնաբանի՛ր տեքստում նշված թևավոր խոսքերը: (1 միավոր)

9. Գրի՛ր հարակատար դերբային բնորոշ հինգ հատկանիշ: (2 միավոր)

10. Գրի՛ր շարադրություն «**Ես մի շիվն եմ իմ հողի**» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)